

ԱՆՅՈՒՄՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

Անցումնային շրջանը, որի մեջ հայտնվեցին նախկին Խորհրդ-
դային Միության երկրները նրա փլուզումից հետո, ունի ինչպես
ընդհանուր, այնպես էլ յուրաքանչյուր երկրի համար առանձնահա-
տուկ գծեր: Մինչ այդ մեր հասարակությունը երբեք այսքան ազատ
չէր եղել: Հասարակական կյանքի բոլոր բնագավառների ազատա-
կանացման շնորհիվ մեծ հնարավորություններ բացվեցին քաղա-
քական բազմապիսի նախաձեռնությունների համար: Հասարակու-
թյունը մտավ իսկապես պատմական փոփոխությունների շրջան, եւ
մարդկային զարգացման նոր հեռանկարներ բացվեցին: Խոսքի,
մամուլի, խղճի ազատություն, ձեռներեցության եւ տեղաշարժերի
ազատություն՝ ահա ձեռք բերված ազատությունների ոչ լրիվ ցան-
կը: Համամարդկային արժեքների, հումանիզմի սկզբունքների եւ
մարդու հիմնական իրավունքների գերակայությունը որոշիչ դեր
ունեցավ նոր տիպի հասարակության ձեւավորման եւ զարգացման
գործընթացում:

Դժվար է չնկատել այն հսկայական փոփոխությունները,
որոնք տեղի ունեցան հասարակության քաղաքական եւ տնտեսա-
կան կառուցվածքի դեմոկրատացման ուղղությամբ: Դեռեւս մի 15
տարի առաջ մարդիկ իրենց ամենահամարձակ երազանքներում
անգամ չէին կարող պատկերացնել նման փոփոխությունների հնա-
րավորությունը: Ամբողջատիրական համակարգը քաղաքացիա-
կան հասարակությամբ փոխարինելը երկրի հիմնական խնդիրը
դարձավ:

Սակայն անցումային շրջանն աչքի է ընկնում ոչ միայն քաղա-
քական արժեքավոր նվաճումներով, այլ նաեւ սոցիալական մեծ
կորուստներով¹: Շուկայական տնտեսության անցնելու հետեւան-
քով ի հայտ եկան սոցիալական բնույթի մի շարք բացասական երե-
ւույթներ: Դրանցից ամենատարածվածներն են՝ գործազրկության
կըտրուկ աճը, տնտեսական ձգնաժամն ու անկումը, տնտեսական
տարածության մասնատումը, բնակչության աղքատացումը, սո-
ցիալական բեւեռացումը, նախկինում գործող սոցիալական պաշտ-

լական երաշխիքների բացակայությունը, պետության դերի անկումը, ինչպես նաեւ հասարակության պառակտման երեւոյթների աճը:

Այս եւ նմանատիպ բացասական երեւոյթները հասարակական գիտակցության մեջ կապվում են շուկայական տնտեսության, ապրելակերպի արեւմտյան ոճի, ժողովրդավարական բարեփոխումների հետ: Շուկայական տնտեսության անցնելու հետեւանքով, ըստ հասարակության մեջ տարածում գտած կարծիքի, հարըստացան առանձին անձինք, հզորացան մաֆիական կլանները, որոնք իրենց հսկողությունը հաստատեցին տնտեսության հիմնական ճյուղերի վրա: Սոցիալական արդարությանը, հասարակությանն ու սոցիալական համագործակցությանը ծանր հարված հասցվեց:

Բնակչության սոցիալական հարցումները ցույց են տվել, որ այս ամենի հետեւանքով հայ հասարակության մեջ աճում են անցյալի նկատմամբ կարոտաբաղձական տրամադրությունները, բացասական վերաբերմունքը տնտեսական վերափոխումների հանդեպ²:

Տեղի է ունենում ժողովրդավարական գաղափարների արժեզրկում եւ իշխանության ամբողջատիրական միտումների աճ: Հայտնի է նաեւ, որ նոր ժողովրդավարական երկրները շատ հեշտությամբ ընկնում են ազգային ավտորիտարիզմի գիրկը: Այս միտումների համար նպաստավոր հող են դառնում բնակչության դժգոհությունը իշխանություններից, նրա ձգտումը դեպի ետ՝ «կոմունիստական դրախտ», բոլոր սոցիալական դժբախտությունների պատճառները շուկայական տնտեսության մեջ փնտրելը:

Ստեղծված իրավիճակում չափազանց կարելու է իշխանությունների շրջադարձը դեպի սոցիալական համագործակցություն, սոցիալական միաբանություն, հավասարության եւ արդարության քաղաքականություն: Անհրաժեշտ է բարձրացնել պետության վարկը, քանի որ նա է մեղադրվում «ժողովրդի շահերի դավաճանության», նրա դեմ «շուկային թերապիա» կիրառելու եւ ազգային հարստությունը թալանելու մեջ: Շուկայական հարաբերություններին կտրուկ անցման տարիները սոցիալական առումով շատ թանկ նստեցին ժողովրդի վրա, եւ այժմ անհրաժեշտ է, որ իշխանությունները ուղիներ որոնեն չքավորությունն արմատախիլ անելու համար, սոցիալական ամենածանր վիճակում գտնվող խմբերի սոցիալական ապահովության հուսալի համակարգի ստեղծման միջո-

ցով քաղաքացիական հավասարություն եւ արդարություն հաստատելու համար³ :

Հակառակ դեպքում կխորանան հասարկության պառակտման երեւոյթները, որ իր հերթին բացասաբար կազդի ժողովրդավարական բարեփոխումների վրա: Առանց բնակչության լայն զանգվածների շահագրգիռ աջակցության, առանց սոցիալական համագործակցության ու համաձայնության իշխանության կողմից ձեռնարկված բարեփոխումները դատապարտված են անհաջողության: Պետության եւ հասարակության անհամաձայնությունը անհնարին է դարձնում ժողովրդավարության զարգացումն ու քաղաքացիական հասարակության կառուցումը: Այնինչ դրական կողմնորոշումը դեպի համագործակցության հետխորհրդային շրջանի հասարակության սոցիալական գիտակցության մեջ պահպանվել է: Այնպես որ այստեղ գոյություն ունի ժողովրդավարական կարգերի կառուցման առանձնահատուկ հիմք, որը սկիզբ է առնում ընդհանուր սոցիալիստական անցյալից: Դա սովետական ոճի սոցիալիզմ էր, որից, սակայն, հասարակությունը, թեկուզ ձեւական, գաղափարախոսական-քարոզչական մակարդակով, սոցիալական արդարության, քաղաքացիական հավասարության, համախմբվածության եւ հասարակական ակտիվության յուրօրինակ դասեր քաղեց: Ծանր անցումնային ժամանակաշրջանը հաղթահարելուց հետո, երբ իսկապես կսկսվի ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության կառուցման գործընթացը, ժամանակի պահանջով ժողովրդավարական կարգերի կառուցման գիտակցությունը նորից կվերականգնվի՝ սակայն բոլորովին այլ սոցիալական միջավայրում՝ քաղաքացիական կամքի ազատ դրսեւորման պայմաններում: Այսպիսի փորձ եւ պատմական անցյալ արեւմտյան ժողովրդավարական պետություններից ոչ մեկը չունի:

Օբյեկտիվ սոցիալական պայմանները կարող են ինչպես խթանող, այնպես էլ արգելակող դեր կատարել սոցիալական համագործակցության հասնելու ճանապարհին⁴: Յուրաքանչյուր հասարակարգ ունի իրեն բնորոշ օբյեկտիվ հիմքերն ու գործոնները, որոնք ազդում են սոցիալական համագործակցության իրականացման վրա: Հիմնական են համարվում հասարակության մեջ գոյություն ունեցող քաղաքական, տնտեսական, մշակութային եւ էթնիկական

հիմքերը:

Սոցիալական համագործակցության քաղաքական հիմքերը կազմավորվում են, հիմնականում, պետության եւ հասարակության, իշխանությունների եւ ժողովրդի, իշխող քաղաքական վերնախավի եւ ընդդիմության միջեւ եղած հարաբերություններից: Այս առումով Հայաստանում իրավիճակը զգալի էվոլյուցիա է ապրել անկախություն ձեռք բերելուց հետո: Առաջին տարիներին քաղաքական կուսակցությունների եւ ուժերի փոխհարաբերություններն ընդհանուր առմամբ կրում էին համագործակցության բնույթ, որ չէր բացառում նաեւ մրցակցությունը: Վերապահություն պետք է անել նախկին կոմունիստների վերաբերյալ, որոնց մի մասն անցավ քաղաքական ընդհատակ եւ արձագանքում էր ժողովրդի աստիճանաբար աճող դժգոհությանը: Մի քանի տարվա ընթացքում մրցակցությունը վերածվեց հակամարտության, իսկ հետո՝ նաեւ խիստ ընդդիմության եւ պայքարի, որն իր հատկապես ցայտուն արտահայտությունը գտավ 1996թ. սեպտեմբերի նախագահական ընտրությունների ժամանակ:

Ժողովրդի եւ իշխանությունների փոխհարաբերություններն այնքան էլ հաջող ընթացք չեն ունեցել: Այդ հարաբերությունները փոփոխությունների վայրընթաց ճանապարհ անցան՝ սկսած ժողովրդի՝ նոր իշխանություններին խանդավառ ողջունելուց մինչեւ հիասթափություն եւ օտարացում: Դա փոխադարձ վիրավորանքների, անհամաձայնությունների, հակառակ կողմի վիճակի մեջ մտնելու ցանկության բացակայության, հասարակությունը միանշանակ կերպով «մենք»-ի եւ «նրանք»-ի բաժանելու ժամանակաշրջան էր: Քաղաքականության ոլորտում հասարակության պառակտումը հասել էր իր տրամաբանական ավարտին: Եվ, այսպիսով, անկախ պետականության կառուցման եւ ամրապնդման հետ մեկտեղ ավելի ու ավելի էր խորանում պետության եւ ժողովրդի միջեւ եղած անջրպետը: Դրա հիմնական պատճառն այն էր, որ իշխանությունների ողջ ուշադրությունը, - եւ ոչ միայն ուշադրությունը, այլեւ տրամադրության տակ եղած միջոցները,- ուղղվեցին նորանկախ պետականության կառուցվածքների ստեղծման, ամրապնդման եւ զարգացման գործընթացին: Այստեղ հասարակությունը, որպես հիմնական գործընկեր, ուշադրությունից դուրս մնաց, նա հայտնվեց «խաղից դուրս վիճակում», որի հետեւանքով եւ բնականաբար ի հայտ եկան օտարացման երեւույթները: Համագործակցության համապատասխան մեխանիզմներ այդպես էլ չստեղծվեցին, իսկ ա-

ռանձին ձեռնարկված քայլերը (ինչպես, օրինակ, Հայաստանի արհմիությունների եւ կառավարության միջեւ 1994թ. ստորագրված պայամանագիրը) անցան ապարդյուն:

Սոցիալական համագործակցության զարգացման համար անհրաժեշտ քաղաքական հիմքեր չկան⁵: Ավելին, ստեղծված քաղաքական իրավիճակը շատ հաճախ խոչընդոտում է համագործակցության իրականացմանը: Եվ, այնուամենայնիվ, քաղաքական ոլորտում գոյություն ունի մի ուժեղ դրական գործոն: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության անկախության համար մղած պայքարը ոչ մեկին անտարբեր չթողեց եւ եղավ այն միավորող ուժը, որը ընդդիմության, ժողովրդի եւ իշխանությունների միջեւ համագործակցության քաղաքական հիմք ստեղծեց: Մյուս նպաստավոր գործոնը քաղաքական կողմնորոշումն է դեպի Ռուսաստան, որի վերաբերյալ համաձայնություն կա հասարակության գրեթե բոլոր ուժերի միջեւ, ներառյալ իշխանությունները եւ ընդդիմության որոշ ուժեր:

Սոցիալական համագործակցության *տնտեսական հիմքերը* Հայաստանում դեռեւս լավ զարգացած չեն: Հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ տեղի է ունենում ինտենսիվ շերտավորում: Աճել է անապահովների, չունեւորների եւ աղքատների թիվը: Գործազրկության բարձր մակարդակի եւ չափազանց ցածր աշխատավարձերի հետեւանքով շատ ընտանիքներ հայտնվեցին չքավորության եզրին:

Ձանգվածային աղքատացման ընդհանուր ֆոնի վրա սկսեցին առանձնանալ հարուստ եւ գերհարուստ «նոր հայերի» ոչ մեծաթիվ խմբերը: Առաջացած տնտեսական շերտավորումը եւ ստվերային տնտեսությունը խոչընդոտում են սոցիալական համագործակցության զարգացումը: Մասնավոր գործարարությունը եւ անհատ ձեռներեցությունը դեռեւս չեն դարձել տնտեսական գործունեության այն ձեւերը, որոնք հավասարապես մատչելի լինեն երկրի բոլոր քաղաքացիների համար: Փորձագետների գնահատականների համաձայն՝ բնակչության 5 տոկոսին պատկանում է ազգային հարստության 70 տոկոսը:

Այստեղ պայքար է գնում ազդեցությունների ոլորտների վերաբաշխման շուրջը, եւ «օտար» շարքային ձեռներեցների համար խիստ դժվար է տնտեսական կյանքում իրենց համար տեղ գտնելը:

Սոցիալական համագործակցություն հաստատելու համար շատ կարեւոր է *էթնիկական եւ մշակութային հիմքերի* առկայությունը: Հայաստանը էթնիկապես միատարր երկիր է: Բնակչության գե-

րակշռող մասը՝ 97%-ը կազմում են հայերը: Այստեղ չեն եղել ևս չկան լուրջ էթնիկական հակամարտություններ եւ ազգամիջյան բախումներ, եւ այս առումով սոցիալական համագործակցության համար պայամանները խիստ նպաստավոր են:

Զնայած էթնիկապես միատարր բնակչությանը, երկրում այնուամենայնիվ կան բազմաձևակության հասարակության որոշ տարրեր: Տարիներ շարունակ երկրի բնակչությունը համալրվել է աշխարհի տարբեր ծայրերից վերադարձող հայերով: Աշխարհով մեկ ցրված եւ մեծաթիվ հայկական սփյուռքից, պատմական տարբեր ժամանակաշրջաններում եւ հանգամանքներում, տեղի է ունեցել ներգաղթ: 1980-ական թվականների վերջին եւ 90-ականների սկզբին ադրբեջանական իշխանությունների սկսած էթնիկական գտման գործողությունների հետեւանքով հարեւան Ադրբեջանից Հայաստան եկան հարյուր հազարավոր բռնագաղթվածներ: Հաստատվելով Հայաստանում՝ ներգաղթողներն իրենց հետ բերում էին այն երկրների մշակութային ազդեցությունները, որտեղ նրանք ապրել էին մինչեւ տեղափոխվելը: Այսպիսով, էթնիկապես միատարր բնակչություն ունեցող երկիրը համալրվում ու հարստանում էր բազմապիսի մշակութային ազդեցություններ կրած մարդկանցով: Ներգաղթվածները սովորաբար ստեղծում էին ազգագրական-մշակութային խմբեր, ծգտում ավելի շատ շփումներ ունենալ միմյանց միջեւ:

Սփյուռքահայերը հսկայական ջանքեր են ներդնում իրենց մայրենի լեզուն եւ մշակույթը օտար միջավայրում պահպանելու համար: Տեղափոխվելով Հայաստան՝ նրանք շարունակում են պահպանել իրենց նախկին բնակության վայրի սովորույթների ու կենցաղի որոշ տարրերը: Դա, սակայն, չի հակասում նրանց ազգային ինքնագիտակցությանը, այլ, ընդհակառակը, հարստացնում է հայ ժողովրդի ընդհանուր ազգային նկարագիրը:

Հոգեւոր համաձայնության անկյունաքարերից մեկն է քրիստոնեությունը: Այն միավորում է ողջ հայությունը՝ թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում:

Անցումը կառավարման վարչահրամայական համակարգից դեպի ժողովրդավարականը բավականին երկար է տևում եւ հասարակության համար բիվանդագին բնույթ է կրում: Պլանային տնտեսության վերածումը շուկայականի տեղի է ունենում հասարա-

կության տնտեսական կառուցվածքի մի շարք աստիճանական վերափոխումների միջոցով: Այդ ընթացքում հասարակությունը անխուսափելիորեն ծանր կորուստներ է կրում: Տնտեսական վերափոխումների սոցիալական գինը շատ բարձր է: Արտադրության կորուկ կրճատման հետեւանքով, երբ փակվեցին շատ արտադրարկան ձեռնարկություններ, մեծ թվով աշխատողներ զրկվեցին գոյատևման միջոցներից: Բյուջետային հատկացումների կրճատումը կրթության, գիտության, մշակույթի, բժշկության եւ սոցիալական բնագավառներում հանգեցրեց կենսամակարդակի կտրուկ անկման: Տեղի ունեցավ այդ բնագավառների որակյալ կադրերի հոսք դեպի այլ, հիմնականում փոքր մասնավոր եւ ընտանեկան գործարարություն, անհատական աշխատանքային գործունեություն, ամեւորի ոլորտ: Զանգվածային առումով չքավորությունը ի հայտ եկավ որպես շրջափակման, պատերազմի, էներգետիկ ճգնաժամի, արտադրության անկման, տնտեսական վերափոխությունների սոցիալական հետեւանք: Փողոցներում թափառող մուրացկաններն ու պոռնիկները դարձան սովորական երեւոյթ: Զքավորությունը, լինելով սոցիալական երեւոյթ, իր հերթին սկսեց ազդել տնտեսական վերափոխումների ընթացքի վրա: Զքավորության տնտեսական գինը նույնպես բավականին բարձր է: Այն խոչընդոտում է տնտեսական զարգացումը՝ անվերադարձ կերպով կլանելով հսկայական միջոցներ, այդ թվում եւ պետական բյուջեից:

Կենսամակարդակի անկումը, աշխատատեղերի պակասը հանդիսացան բնակչության տեղաշարժերի եւս մեկ պատճառ: Վերջին 6 տարիների ընթացքում աճեց գյուղական վայրերից քաղաք ներգաղթողների թիվը: Հողի սեփականաշնորհումը, լինելով անշուշտ դրական երեւոյթ, ունեցավ նաեւ բացասական հետեւանքները: Սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված անարդարությունների, գործընթացի անհամաչափության հետեւանքով, ինչպես նաեւ սեփականաշնորհված հողերի անհավասար պտղաբերության պատճառով, գյուղական բնակչության մի մասը, հատկապես լեռնային եւ նախալեռնային շրջաններից, ջրագուրկ եւ չոր վայրերից, ստիպված եղավ գաղթել քաղաքներ աշխատանք փնտրելու⁶:

Սոցիալական շերտավորումը ինչ-որ չափով դրսևորվեց նաեւ գյուղական բնակչության մեջ. այն բաժանվեց հարուստ ֆերմերների խավի, որոնց բաժին ընկան Արարատյան դաշտավայրի լավագույն հողերը, եւ բարձրլեռնային եւ ոչ բերրի հողեր ունեցող

շրջաններում բնակվող աղքատ գյուղացիների խավի: Գյուղական աշխատանքների համար անհրաժեշտ մեքենաների պակասը եւ ուռուցման ջրի հետ կապված խնդիրները նույնպես դարձան շատ գյուղական տնտեսությունների՝ մինչ այդ խորհրդային տնտեսությունների, անարդյունավետության պատճառը:

Գյուղից դեպի քաղաք տեղի ունեցող գաղթը եւ արտագաղթը հանրապետությունից դեպի ԱՊՀ երկրներ՝ աշխատանք փնտրելու նպատակով, մեծ չափեր ընդունեցին: Աշխատուժի անկազմակերպ եւ տարերային արտահոսքը կապիտալի արտահանման հետ մեկտեղ թուլացրին երկրի տնտեսական ներուժը: Փաստորեն երկրից դուրս եկավ տնտեսապես ակտիվ բնակչության 30%, այսինքն՝ այն մարդիկ, ովքեր զբաղվում էին մասնավոր գործարարությամբ եւ պետք է հանդիսանային բնակչության նոր կազմավորվող միջին խավի կորիզը: Տնտեսապես ակտիվ բնակչության տեղաշարժերի հետեւանքով ծերունիների, երեխաների, գործազուրկների եւ մյուս անապահով խավերի ներկայացուցիչների թիվը ընդհանուր բնակչության մեջ աճեց 15-20%: Այսպիսով, մեծացավ պետության վրա ընկած բեռը, որը պարտավոր է հոգատարություն հանդես բերել անապահով խավերի նկատմամբ, եւ դրանով լրացուցիչ արգելքներ ստեղծվեցին երկրի նոր կայացող շուկայական տնտեսության համար:

Օտարացման զգացումը հասարակության մեջ առաջացավ ոչ միանգամից, այն աստիճանաբար հասունացավ՝ ընդգրկելով հասարակական կյանքի տարբեր ոլորտները: Հայաստանում օտարացման զգացումը բավականին երկակարատեւ գործընթացի հետեւանքը եղավ, նրա հիմքում ընկած էին մի ամբողջ շարք հիասթափություններ, արժեքների վերագնահատման ու կորստյան գիտակցումը: Հիասթափության տրամադրությունները սկիզբ առան 1992թ. կեսերից: Մինչ այդ ժողովրդի վերաբերմունքը անկախության շարժման ղեկավարների հանդեպ միանշանակ կերպով դրական էր: Նրանք վայելում էին հարյուր հազարավոր քաղաքացիների աջակցությունը, համակրանքն ու սերը: Այդ ժամանակահատվածում իշխում էին փոխըմբռնման եւ շահագրգիռ համագործակցության տրամադրություններ: Ժողովրդական շարժման ղեկավարները շուտով հայտնվեցին իշխանության գլուխ եւ դեռ մի որոշ ժամանակ վայելեցին ժողովրդի վստահությունը:

Սակայն որոշ ժամանակ անց երեւացին անվստահության առաջին ծիւրերը: Աստիճանաբար սկսեց աճել ժողովրդի հիասթափությունը նոր իշխանություններից: Այդ հիասթափության պատճառները հիմնականում կյանքի դժվարին պայմաններն էին: Շիջափակման ու տնտեսական ճգնաժամի հետեւանքով հարյուր հազարավոր մարդկանց կյանքն ուղղակի անտանելի դարձավ: Մարդիկ նախապատրաստված էին ծանր զրկանքների: Դրական ակնկալիքներին փոխարինելու եկավ դառը իրականությունը: Հասարակության համար ընդհանուր առմամբ այդ հիասթափությունն արտացոլում էր չափազանց մեծ սպասելիքների ու չիրականացած հույսերի միջեւ եղած հակասությունը: Վրա հասած հիասթափությունը անխուսափելիորեն տարածվեց նաեւ նոր արժեքների վրա ժողովրդավարության, անկախության, ազատ շուկայական հարաբերությունների: Առաջնորդների եւ իշխանությունների հանդեպ եղած վստահությունը փոխարինվեց անվստահության ու ընդդիմության տրամադրություններով: Հիասթափության ալիքը տարածվեց նաեւ քաղաքական ընդդիմության վրա: Հասարակական կարծիքի համաձայն, քաղաքական ընդդիմության հաղթանակը էր հանգեցնի երկրում տիրող իրավիճակի կտրուկ բարելավմանը: Ընդդիմադիր կուսակցությունների հանդեպ մարդիկ ցածր հետաքրքրություն ցուցաբերեցին: Ժողովրդի 65%-ը շարունակում էր մնալ բազմաթիվ քաղաքական կուսակցությունների ազդեցությունից դուրս՝ չկիսելով դրանցից ոչ մեկի գաղափարները⁷:

Սոցիալական օտարման վիճակում մարդիկ դադարում են պատասխանատվություն զգալ իրենց շրջանի, քաղաքի եւ երկրի ճակատագրի համար: Նրանց հետաքրքրությունները սահմանափակվում են ընտանիքի, մտերիմ բարեկամների եւ ընկերների շրջանակներով: Տեղի է ունենում հասարակական կյանքի մասնաբաժանում՝ ատոմիզացիա, որպես հետեւանք հասարակության մեջ օտարացման երեւոյթների առկայության եւ համագործակցության բացակայության: Դրա փաստացի արտահայտումը եղավ նաեւ զանգվածային արտագաղթը: Պետություն-հասարակություն եւ իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների համակարգում, ինչպես նաեւ ներհասարակական հարաբերությունների ենթահամակարգում եւ Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերություններում, պետությունը պետք է ստանձնի նախաձեռնողի, այդ հարաբերություններին որոշակի երանգ ու բնույթ հաղորդողի դերը:

Հայ հասարակության եւ նոր ժողովրդավարական պետության հարաբերությունների ձեւավորման սկզբում հասարակությունը

բաց էր համագործակցության համար: Այդ պահին հասարակական-պատմական գործընթացի երկու գլխավոր գործող սուբյեկտների միջեւ տիրում էին փոխադարձ վստահության հարաբերություններ: Պետական անկախությունը, նոր ժողովրդավարական հասարակություն հիմնելու ձգտումը հատուկ իմաստ ու հույսեր էին ներշնչում ապագայի հանդեպ: Հասարակական գործընթացի մասնակիցների միջեւ համագործակցությունը խթանում էր զարգացումը: Սակայն տնտեսական եւ քաղաքական վերափոխումների հետագա գործընթացը բացահայտեց, որ իշխանությունները հասարակության մեջ իրական համագործակիցը չեն տեսնում: Երբեմն այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ բնակչությունը տնտեսական վերափոխումների իրականացման հարցում նույնիսկ «խանգարող» գործոն է: Պետության կողմից որդեգրած բարեփոխումների ծրագիրը միակողմանիորեն ընդգրկում էր քաղաքական եւ տնտեսական փոփոխությունները՝ անուշադրության մատնելով սոցիալական ոլորտը: Տնտեսական նեղ ուղղվածությունը, կողմնորոշումը դեպի շուկայական տնտեսություն՝ առանց հաշվի առնելու ազգային, պատմական եւ մշակութային գործոնները, խոր անջրպետ առաջացրին հասարակության եւ պետության միջեւ:

Ստեղծված պայմաններում իշխանությունները իրենք պետք է նախաձեռնեն առաջին քայլերը սոցիալական համագործակցության ուղղությամբ: Շատ կարելի է համագործակցության մեխանիզմների իրականացումն սկսել կառավարման ստորին աստիճաններից, որոնք անմիջապես շփման մեջ են բնակչության հետ: Հենց այստեղ, տեղական իշխանության կառուցվածքներում է տեղի ունենում ամենախնտենսիվ շփումը սոցիալական տարբեր խմբերի հետ: Այս ուղղությամբ ձեռնարկվող իրական քայլերը, մասնավորապես բնակչության մասնակցության հստակ մեխանիզմների կիրառումը տեղական մակարդակով որոշումներ կայացնելու գործում, կարող են հիմք դառնալ համագործակցության զարգացման համար, հատկապես եթե հաշվի առնենք, որ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման վարչական նոր համակարգը ստեղծում է պայմաններ այդպիսի համագործակցության համար: Նրա արդյունավետությունը կախված է այն բանից, թե կառավարության կողմից նշանակվող մարզպետները եւ նրանց վարչակազմը որքանով կկարողանան իրականացնել համագործակցությունը տեղական ինքնակառավարման ընտրովի մարմինների համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի հետ: Դա կարող է

լավ ազդակ լինել սոցիալական համագործակցության գործընթացի մյուս մասնակիցների համար, համագործակցության զարգացումը կընթանա իշխանության ստորին աստիճաններից մինչև վերին աստիճանները, եւ ողջ պետական համակարգն ավելի արդյունավետ կդարձնի: Զէ՞ որ հատկապես կարելու է, որ իշխանությունները հասարակության հետ համագործակցության եզրեր գտնեն կառավարման բոլոր մակարդակներում:

Հարկավոր է նշել, որ Հայաստանը ԱՊՀ երկրների կազմում առաջինն էր, որ անցկացրեց հողի սեփականաշնորհում, հետագայում իրագործեց գների ազատականացում, ներմուծեց բանկային նոր համակարգ եւ սկսեց արդյունաբերության ապապետականացումը: Այժմ Հայաստանն առաջիններից է, որ սկսում է ներդնել տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման օրենսդրորեն ամրագրված նոր համակարգ: Այն նախատեսում է կառավարության կողմից նշանակվող մարզպետների (իրենց վարչակազմով) եւ համայնքի կողմից ընտրվող ավագանու համագործակցությունը տեղական կառավարումն իրագործելու համար: 1996թ. հոկտեմբերին նոր օրենքով անցկացված տեղական իշխանությունների ընտրություններով արվեցին առաջին քայլերն այս ուղղությամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Куда идет Россия? Общее и особенное в современном развитии. Москва, 1997г.
- 2 *Գեորգ Պողոսյան, Սամսոն Մխիթարյան* Ժողովուրդ, Իշխանություն, Առաջնորդներ. Երեւան, «Մխիթար Գոշ», 1996թ.
- 3 Մարդկային Զարգացման Զեկույց. Հայաստան-96. UNDP, Երեւան, 1996թ.
- 4 Democracy, Civil Society and Pluralizm. Edited by Christopher G.A. Bryant and Edmund Mobrzycky. Warszawa 1995.
- 5 *Գեորգ Պողոսյան, Սամսոն Մխիթարյան* Հայաստանի քաղաքական կուսակցությունները (Տեղեկատվություն եւ վերլուծություն 1991-1996թ.թ.), Երեւան, «Մխիթար Գոշ», 1997թ.
- 6 Սիսիանի շրջանի գյուղացիական տնտեսությունների իրավիճակի սոցիոլոգիական ուսումնասիրություն (նոյեմբեր-դեկտեմբեր 1997թ.)
- 7 *Gevorg Pogosian* An Armenian's life in Armenia. Yerevan 1996.